

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԶԱՎԵՆ ՔԱՀԱՆՍ ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ

(Փիլիսոփայության դոկտոր)

ՈՒԽՏԱՆԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵԲԱՍՏԻՈ ԵՎ ԻՐ «ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿԸ*

Պատմագիտական կարևոր ակնարկ մը ևս ունի Ուխտանես իր երկի Ա հատվածի վերջավորության։ Վերջընթեր գլուխը (<Ե>) ամբողջությամբ ընդօրինակված է հայագիտության համար տակավին կորսված և անձանոթ Շապուհ Բագրատունիի «Պատմութիւն»-են զոր գրած էր թ դարուն և որուն կվկայե հաստատ կերպով ժ դարու հայտնի հեղինակ Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսը։ Ուխտանես հետևյալ վերնագիրը կոտոր այդ գլխուն. «Յաղաք թագին երաներյն Կոստանդիանոսի թէ ուստի» կամ ո՞րպէս յաջողեալ եղեւ նմա ի Տեառնէ, Շապիոյ որդուոյ Աշոտոյ Ապահի պատրիի ասացեալ ի Պատմութեան իւրոյ։ Շապուհ Բագրատունիի երկը կորսված ըլլալով Ուխտանեսի արտագրած ման գլուխը կրնա գլխավոր վակերական նմուշը ըլլալ թ դարու մեր պատմիչին։ Շապուհ պատմիչ թոռն էր իր համանուն Շապուհ Բագրատունիի, մեռած 824 թվականին, որ ծանոթ է պատմության մեջ որպես մեկնասոր կամ պատվիրատուն Ալոնդ Երեց պատմիչի գրած Պատմության Ը դարուն։ Շապուհ պատմիչի հայրն էր Աշոտ Պատրիկ, ինչպես Ուխտանես կիշատակե, որուն մասին հիշատակություն ունի նաև Ստեփանոս Ասողիկ (Պատմություն, էջ 144)։

Նույն խնդրի կապակցությամբ Ուխտանես կերպակացնե ըսելով. «Արդ, ասացաք զորպիսութիւն թագին ի պատմութենէ Շապիոյ։ Հոն կխոսվի համառոտ կերպով Մեծն Կոստանդիանոսի թագ ստանալը, Կ. Պողոս

որպիս կայսերական մայրաքաղաք կառուցանելը, Հռոմեն Պետրոսի և Պողոսի նշխարներուն փոխադրությունը դեպի նոր մայրաքաղաք, Հապուհ Բ (310—379) Պարսից արքայի հնապանդրությունը Կոստանդիանոսի, և երկութին միջև գոյացած հաջորդությունը, Շապուհ արքայի դրկած թագը Կոստանդիանոսի որպիս միակ օրինակ-նմույշ, որուն համաձայն շինել պիտի տար նմանօրինակ թագ մը իրեն համար, և վերջապիս կայսեր թագադրվիլը։ Վերջավորության կը նշվի Մեծն Կոստանդիանոսի տապանը որ կգտնվեր «ի հրաշալի եկեղեցւոյն», որուն բնին տակ կիհանգչեր նաև Հովհաննես Ուկերեան Հայրապետը։

Բ ՀԱՏՎԱԾ. «Պատմութիւն Բաժանման Վրաց ի Հայոց».

Ուխտանեսի երկին կարևորագույն մասը Բ հատվածն է —Վրաց եկեղեցական բաժանումը Հայոց Եկեղեցինես— որուն մանրամասն պատմողն է ինք, որ նաև պահած է իր երկին մեջ ընդարձակ և լրիվ թղթակցությունները ընդմեջ Հայոց և Վրաց կաթողիկոսներու, ընդմեջ Սմբատ Բագրատունի Վրկանա Մարգարանի և Վրաց Կյուրին կաթողիկոսի։ Հատկանշական է նաև այն հիմնական կարևորությունը, զոր Ուխտանես կընծայե Ցուրտավի հայ եպիսկոպոս Մովսեսին, որուն ավանդապաշտ և հախուն կեցվածքը պատճառ կդառնա Վրաց Կյուրին կաթողիկոսի կեղծիքին երևան գալուն, և հետպետե Հայ-Վրացի հարաբերությանց վատքարացումն։ Միան Ուխտանեսն է, որ այս մասին մանրամասնությամբ գրած է,

* Հարուսակիած «Էջմիածին» ամսագրի 1985 թվականի № Զ-ից։

դևաքերեն մոտ 375 տարի ետք, և հիսջորոյդ պատմաբաններ երախտապարտ եղած են իրեն իր գրած պատմության և հավաքած թյակցությանց համար: Սիակ աղբյուրը, որ կրնա բաղդատության դրվիլ Ուխտատեսի այս հատվածին հետ ԳԻՐՔ ԹՂԹՈՒՑՆ է, որ որպես Հայ Եկեղեցի դավանական գրոց պաշտոնական հավաքածող գոյություն ունեցած է Ուխտանեսի օրով, քանի որ ինք հաճի կակնարկե անոր «ի գիրս թղթոցն» ըսելով. Կամ «ոչ գտաք գրեալ ի գիրս թղթոցն»: «ոչ գտայ ի կարգի գրեալ ի գիրս թղթոցն»:

Մինչև է դարու սկիզբը Հայոց և Վրաց Եկեղեցիներու միջև համաձայնությունը կատարյալ էր, և ամեն հարյուր տարի առաջ, 506 թվին, Վրաց Գաբրիել կաթողիկոսը իր աթոռակից եպիսկոպոսներով գացած էր մասնակցելու Բարքեն Ա Ռիմսեցի հայոց կաթողիկոսի գումարած 'Էլինի ժողովին, ուր Գաբրիել «նովուաց զժողովն Քաղկեդոնի եւ վտումարն Լեռնի լնդ երանելի հարսն մեր հանդերձ աթոռակցօք իւրովք» (Ուխտանես, Բ 85—86): Այդ ձամբորդությունը կցուցներ Վրաց կաթողիկոսության ենթակայությունը Հայոց կաթողիկոսության, դրություն մը որ «ի վերջո հառաջ պիտի բերեր ազգային արժեքներու իրավատության հարցը», ինչպես կնշե Լեռ (Հայոց Պատմ., Բ. ա. 227)

Մովսես Բ Եղիվարդեցի կաթողիկոսի օրով (574—604) կակսին բաժանման խորումները Կյուրիին Վրաց Եպիսկոպոսի «Կեղծաւորեալ» ընթացքին հետևանքով կոր Ուխտանես կինե «ամս հինգ. վերկուս ամս» Մովսես Եղիվարդեցիի ատեն (602—604), և «զերիս ամս վկնի մահուան նորա», որ է Վրթանես Քերթող Վարդապետի տեղապահության ման շրջանը (604—607): (Ուխտանես, Բ 16, 23): Կյուրիինի Վրաց կաթողիկոս դառնալեն ետք և Աբրահամ Աղբաթանեցի Հայոց կաթողիկոսի (607—615) երկրորդ տարին տեղի կունենա Վրաց Եկեղեցական վերջնական բաժանումը Հայոց Եկեղեցինեն Կյուրիինի իսկ որոշմամբ: 608 հունիսին, ըստ Օրմանյանի, հարաբերությունք կիսվին երեք ամբողջ դարեր «սերտ և ներքին հարաբերություններ պահելե ետք լուսավորության օրեն ի վեր» կորս ամրապնդեցին, կիաստատե Աբրահամ կաթողիկոս, «նախ երանելին սուրբ Գրիգոր, և ապա Մաշտոց» (Ուխտ. Բ 84): Ուխտանես այս պատմական դեպքն է որ կապտմագրե իր բոլոր մանրամասնություններովն ու հարակից լրիվ թղթակցություններովը, կրկնարանելով իածանախախ և ծանրորեն դատապարտելով Կյուրիին Վրաց կաթողիկոսը, գործածե-

լով խիստ լեզու, երեւմն ալ անպատշաճ ոճ և բառամթերք, ցուց տալու համար թե որքան աղետաբեր պիտի ըլլար նման բաժանում մը «ուղղափառ» հավատքեն, որ Հայոցն էր: Ուխտանես ծանրորեն կդատապարտե Քաղկեդոնի ժողովն ու Լսոնի Տուարը և անոնց քրիստոսաբանական ուսուցումը, որուն հարեցավ Կյուրիին և Վրաց Եկեղեցին է դարու սկիզբեն ի վեր:

Ուխտանեսի այս Բ հատվածը կրաղկանա 70 անհավասար գուխներե, որոնցմէ 26ը թյակցություններ են գրված ընդմեջ Մովսես Եղիվարդեցի (1), Տեղապահ Վրթանես Քերթողի (8), Մովսես Ցուրտավի Եպիսկոպոսի (6), Վրաց Կյուրիին կաթողիկոսի (5), Աբրահամ Հայոց կաթողիկոսի (4), և Սմբատ Բագրատունի Վրկանա Մարգարանի (2): Մասցաւ 44 գուխները Ուխտանեսի կողմէ գրված պատմական կարևոր գիտելիքներով լեցուն մեկսաբանություններ են որոնք անվերջ կանդրադառնան Կյուրիինի ընթացքին և անոր անհավատարիմ և համար կեցվածքին՝ հանդեպ ուղիղ դավանության: Վերջին գուխը Աբրահամ կաթողիկոսի Կոնդակին հատկացված է, ուր մանրամասնորեն կերպնվին առաջին երեք Տիեզերական ժողովներու ուսուցումները և կապահարակվի քաղկեդոնականությունը, որուն հարեցան Կյուրիին և Վրաստան: Պատմական դեմքերը վերոհիշյալ նամակագիրներն են, որոնց մեջ ցայտուն կրառնան Կյուրիինն ու անոր նախանձախնդիր հակառակորդը Ցուրտավի Մովսես Եպիսկոպոսը:

Կյուրիին վրացի հոգևորական մըն էր, լավ պատրաստված. ծնած էր Զավախչի Սկուտարի գուղը և աշակերտած Վրացերեն ու Հայերեն դպրությանց. հետևած էր Հունական ուսմանց, 15 տարի ընակելով Նիկոպոլիս: Ամեն եկած էր Դիլին և Հայոց Հայրապետանոցին ծառայության մտած իրուն «վանաց երեց», և հետո իբրև «քրոբիսկոպոս» Այրարատյան թեմին, ուր կմաս «ամս հինգ»: Կյուրիին Վրաստանի կաթողիկոս կձեռնադրվի Հայոց Մովսես կաթողիկոսն, վերջնույն 25րդ տարին, այսինքն 598 թվականին: Մովսես միամիտ կերպով շարժած է վինք ձեռնադրելով «անգիտացեակ զծածուկ նորա սրտին» (Ուխտ. Բ 4): Նույն տարին մեռած է Վրաց Սամվել կաթողիկոսը, իսկ 604ին ալ՝ Հայոց Մովսես կաթողիկոսը, որուն հաջորդող երեք տարիներուն Հայոց Տեղապահությունը կվարե Վրթանես Վարդապետ Քերթող: Այդ ժամանակամիջոցին Կյուրիին կհետապնդե իր բաժանարար նպատակը և զայն ի գործ կիանե նորընտիր Աբրահամ Աղբաթանեցի կաթողիկոսի երկրորդ տարին:

Վրթանես Քերթող հեղինակավոր եկեղեցական մըն էր և «հարազատ եղայրը օրվան Սմբատ Բագրատունի Վրկանա Մարգարականին» (Լեռ, 228): Ան Հունարեն լեպիկն տեղյակ և մատենագրական կարողությամբ օժտված անձ մըն էր. իսկ իր թղթակցությունները կվկայեն իր ուժեղ հակաքաղեդդրոնական մը ըլլալը: Վրթանես Բագրատունյաց իշխանական տոհմեն էր և որդին Քչիկ Իշխանի: Ավելին՝ անոր երկու եղայրները կարևոր դիրքի վրա էին, մին նույն ինքն Սմբատ Մարգարանը, որ Խոսրով Փարվեսի արքայական ծառայության մեջ էր, և մոլուք Գիգ՝ Դաշտկարանի Տերը (Ուխտ. Բ 58): Սմբատ մեծարված էր իր քաջագործություններով իր ուղարքան պաշտոնավարության լընթացքին, երբ կարողացավ զսպել Պարսից թշնամինները և վարել «բազում պատերազմունը ի Հայու, ի Յոյնս, եւ ի Պարսիկս»: Վըրկանի մեջ Սմբատ վրայիցամ նաև հայ գաղթականներով, ուր մոռցված գտավ հայերեն լեզուն և քրիստոնեական հավատքը, և «յանիշխանութեանն Հայոց ելից վերութիւն թագաւորի եւ զայկատութիւն Հայրապետի»:

Սմբատ երբ Դվին այցի եկավ, շտապեց եկեղեցական ժողով գումարել տալ, Մովսես կաթողիկոսին հաջորդ մը ընտրելու համար: Ժողովը կգումարվի 607ին, որուն կմասնակցին 50 եպիսկոպոսներ և 390 վարդապետ ու քահանա, և մեզի անհայտ պատճառով այդ ժողովը չի կրնար կաթողիկոսի ընտրություն կատարել, այլ միայն կմշակելու կվավերացնե մի քանի կանոններ, ուղղված այն հոգևորականներուն դեմ, որոնք գիտությամբ կամ անգիտությամբ աղանդներու կիարեին, մասնավորաբար քաղկեդոնականության: Ուխտանես «Ձեռնարկ Սըմբատայ» կեռչ այս առաջին ժողովի որոշումը, որ կինքի Բատենի Մանասե Եպիսկոպոսի և իր աթոռակից եպիսկոպոսներու կողմե, ինչպես նաև «Սմբատ Վրկան Մարգարանի իւր եղայրօք հանդերձ», որով կիասկը վիճակին «Ձեռնարկին» սկիզբ հիշված Սըմբատը, Վարդապետ Հայոց Հարսաղարը (որ է Վրթանես Տեղապահ), և Գիգ՝ Դաշտկարանի Տերը: Հու կիայտսվի երեքին հարապատ եղայր ըլլալը:

Դվինի 607 թվի ժողովը կորոշե, թե ինչ վերաբերմունք պիտի որդեգրե Հայոց Եկեղեցին հանդեպ իր դավանակից և ուխտակից եկեղեցիներուն՝ Վրաց, Աղվանից և Սյունյաց անջատողական ձգտումներուն: Երեք եկեղեցակավոր եղայրներու, Քչկան որդիներու կառավարությունը, երբ Կուրիոն կաթողիկոսի հետ բանակցություններու սկսալ, իիմնիցամ ժողովի այս որոշման վրա:

Նոյն թվականին Սմբատ Մարգարականի նախաձեռնությամբ գումարվեցավ եկեղեցական երկրորդ ժողով մը դարձյալ Դվինի մեջ, և կաթողիկոս ընտրեց Ռշտունյաց Արքահամ եպիսկոպոսը. «Գալ ժողովի ի ժամադրեալ տեղին ի հոյակապ եւ յականաւոր եւ հոչակաւոր մեծ մայրաքաղաքն Հայոց Դվինի կոչեցեալ» (Ուխտ. Բ 60): Ըստրութեան եւոք ներկա եպիսկոպոսներ կձեռնադրեն Արքահամը կաթողիկոս Հայոց «կիսի սրբոյ Զատկին յաւր կիւրակէի, յեւ ամսոյն Նաւասարդի»:

608 թվի գարնան Սմբատ Մարգարան Պարսից արքունիք կկանչչի, ուր իրեն կըսպատեին կարևոր հանձնառություններ թե «Վրկանի մեջ և թե» Պարսկաստանի մեջ: Իր մեկնումնեն առաջ Սմբատ կարողացավ կարևոր ծառայություն մը ևս մատուցանել: Ան Խոսրով արքայից արքայեն արտոնություն առանալով վերանորոգել տվալ Դվինի Ս. Գրիգոր աթոռանիստ Մայր Եկեղեցին, որ կործանած էր Վարդան Մամիկոնյանի 571ի ապստամբության ժամանակ:

Ուխտանեսի ՀԱՅՈՅ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ պատմական այս տվյալներու լուսին տակ պետք է կարդացվի: Նկատի առնելով անոր վավերականությունը և մանավանդ անոր տրամադրելի չըլլալը արևետյան պատմագիտության, մենք հանձն առինք անոր ամբողջական թարգմանությունը կատարել և անգլերեն լեզվով պայն ծանոթացնել բոլորին, հանդերձ ծանոթագրություններով ու ներածականով:

Գ ՀԱՏՎԱԾ. «Մկրտութիւն Ապօհն որ Շաղն Կոչին»:

Ծադերու մկրտության կամ դարձի մասին պիտի ըլլար Ուխտանեսի Պատմության Գ հատվածը որ, ինչպես ըսինք, մեր ձեռքը չէ հասած: Իր Նախարանին մեջ հետևյալ կկարդանք Ծադերու մասին.

«Եւ զամենայն կարգել մի ըստ միոցէ ըստ իւրաքանչիւր խորհրդոց: Նախ պիտի թագաւորաց եւ հայրապետաց մեռոց, եւ վրաժանումն Վրաց ի Հայոց միաբանութենէ, եւ յետ այնորիկ վՄըկրտութիւն ապօհն որ Շաղն կոչի, նաեւ զգաւառ եւ զգեղս գիշաւորս, եւ զարդարս եւ զբերդս իւրաքանչիւր գաւառոք որ են յաշխարիին յանմիկ, որպէս եւ կանք քո իրամայեցին, եւ զվանօրայս հանդերձ վանականօք անուամբ իւրաքանչիւրոց, եւ զանապատս միայնաւորաց, եւ որք բազմակեցք եւ որք միայնակեցք բնակեալ յաստատ եւ յանապատս, եւ զօրինակ ցուցանիկ զօ-

բութեանն Ասոուծոյ, որ ի ծածուկս և ի յարմնի գործէք ի մկրտեալսն երեւամբ նշանաց և արուեստից, տեսլեսամբ և յայտնութեամբ, միանգամայն և զգործ հոգեւորս» (Ուխտանես, Ա 14):

Ծադերը հայկական ծագում ունեցող ժողովորդ մը ըլլարու են, և պիտի համապատասխանեն Մովսես Խորենացիի հիշած «Ծավդեացիներուն», որոնք Առանի սերունդն էին ու կընակեին Հայաստանի հյուսիսը, ու պաշտպանությունը կփայելեին Հայոց Վաղարշակ թագավորին (Մ. Խորենացի, Պատմթ. Բ. ը): Որպես Առանի սերունդ անոնք բնակլություն հաստատած էին Սյունիքի սահմաններեն դուրս, Ուտիք նահանգին արևեցան կողմը և կամ նույնիսկ Ուտիքի մեջ, Կուր գետի ավազանի աշխն, ուրկե գետը կիոսի դեպի Կասպից ծով (Ալիշան, Այրարատ, 186): Պրոսէ կենթադրեն նաև թե Ծադերու սերունդն մարդիկ բնակություն հաստատած էին Չամախի շրջանի երկու գյուղերուն մեջ, ուր անոնք պահած էին Ուտեացիներու լեզուն և պանդությունները (M. Brosset, *Oukhtanes*, Int. XII):

Ծադերու մասին ակնարկություն մըն ալ ժԳ դարու պատմիչ Մխիթար Այրիվանեցին ունի, որուն Պատմության մեջ, 821 թվականի վերաբերյալ տեղեկությանց առօնքեր, կիշկի Փարտման քահանայի մը անունը, որ նախապես եղած է Հայ Եկեղեցվու պատկանող մը, որ սակայն կրոնափոխ ըլլարով հարած է Վրաց հավատքին, և կրոնափոխ ըրած է նաև Ծադի բնակիչները, որոնք ժԳ դարուն տակավին Քաղկեդոնիկ ճանչված

էին Մխիթար Այրիվանեցիի կողմէ: (Անդ, ձնթ. 4):

Ուստի Ծադերու Քրիստոնյա դարձը պետք է պատահած ըլլա ժ դարեն շատ առաջ: Անոնք հաստատ մնացած են իրենց Քաղկեդոնիկ վարդապետության մեջ Ուխտանեսի ապարած ժամանակ և, ըստ Պրոսէի կարծիքին, իրենց վրա նույնիսկ թշնամությունը հրավիրած են Հայերուն: Այս պատճառով է որ, կեպրակացնե ան, «անկասկած» դիտմամբ Ուխտանեսի Պատմության Գ հատվածը փճացված է: Պրոսէի կարծիքը հավանական կրնա ըլլալ այն ատեն միայն, երբ ընդունինք Մխիթար Այրիվանեցիի տեղեկությունը, ըստ որում Ծադ կոչեցյալ ժողովուրդը թ դարու սկիզբը միայն քաղկեդոնականությունը ընդունած է: Խոկ անկե առաջ, որքան կանուխ՝ հայտնի չէ, անոնք հայ ուղղափառ դավանանքը ընդունած ըլլարու են, և այդ մասին է, որ Ուխտանես մանրամասնորեն գրած պիտի ըլլա և շատագոված անոնց հիմնական հավատքը իր Պատմության Գ հատվածին մեջ: Հարկ է այսուղ պեղնել, որ ժԳ դարու հայ պատմիչներ, գիւղավորաբար Կիհակոս Գանձակեցի և Ստեփանոս Օրբելյան, երբ կալւնարկեն Ուխտանեսի գործին, որոշ մանրամասնությամբ ալ կմկարագրեն անոր բովանդակությունը, իհշելով միայն Վրաց բաժանման նկարագրությունը Հայոց Եկեղեցինեն: Չատ հավանաբար Գ հատվածը, որ Ծադերու Քրիստոնեության դարձին կվերաբերեր, արդեն իսկ «փճացված» էր և կամ անջատված Ուխտանեսի երկեն նույնիսկ Գանձակեցիի օրով. այլապես ինչո՞ւ Գանձակեցի և Օրբելյան պիտի չանդրադառնային նաև Ծադերու դարձին, և երկտողով մը գոնե ակնարկեին այդ մասին:

—————
ՈՒԽՏԱՆԵՍԻ «ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» Բ ՀԱՏՎԱԾԻ ՍԽԱԼՆԵՐԸ
ԸՆՏ ՎԱՂԱՐՉԱՊԱՏԻ 1871-Ի ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ԵՎ ՄԵՐ ԿԱՏԱՐԱԾ ՀԱՄԱՊԱՏՍԽԱՆԱՆ ՈՒՂՂՈՒՄՆԵՐԸ

ԷԶ ՍԽԱԼ

- | | |
|----|-------------------|
| 19 | վոր ի սրբոց |
| 21 | Զոր ապա |
| 25 | ըստ առանց պտղոյ |
| 29 | նենցեցին |
| 33 | սրբոց աթոռոյդ |
| 37 | նախարարաք |
| 41 | եւ եթէ գթութիւն |
| 44 | վիրուկիւն |
| 49 | ի ժամս. պնդեալ են |
| 51 | մահացան |
| 54 | եւ այլն լինէր |
| 58 | գեղաջալկարին |

ՈՒՂՂԻԴ

- | |
|----------------------|
| որ ի սրբոց |
| կորմէ ապա |
| առանց պտղոյ |
| նենցեցին |
| սրբոյ աթոռոյդ |
| նախարարք |
| եւ եթէ գթութեամբ |
| վիրաւորութիւն |
| ի ժամս, զի պնդեալ են |
| մահացու |
| եւ այս լինէր |
| Գիգ Դաշտկարանին |

59 որ յառաջնորդեաց
 61 սակա երկուցն կորստեան
 62 որ յաջորդեալ զաթոռն
 62 այլ եպիսկոպոս այլօք հանդերձ
 63 Յունաց կողմանէ են ներկեալ
 64 Ահարոնի Վեհնունեաց
 64 Թէոդորոս եփական գնդին
 67 որով օծանեն եւ լուսաւորեն
 68 ցրուեցին
 70 Արդ փութացաք (ցվերջ գիշոյն)
 72 Թէ ընդէ՞ր եկն Մովսէս
 72 Թուղթսն զոր գրեցաւ առ Կիւրիոն
 73 ի մինչ ոչ է
 75 եւ տոռմարն Լեւոնի
 76 սուրբ Աթոռ երանելոյ
 76 Վրացի եւ հասումն գիտէ
 78 զոր կարծիս տայ տեսողաց
 86 զպոման
 88 քաջասատարութիւն
 94 ամենայն հակառակութիւն եղեւ
 95 Զթուղթս զոր արարեալս եր
 95 գրեալս էր
 99 երկմտեցոյ ինձ զձեզ
 99 եւ է եւ ի հեռագոյն տեղիս
 քննութիւն իմիք
 99 պատուհաս՝ զոր արժան է առնել
 100 եւ զեպիսկոպոսն Նեստորական,
 զոր արարին դպրութիւն, զի եւ
 Վրացերէն գիտէ՝ որպէս արժանն
 է՝ թող թէ Հայերէն, եւ անյայտ է:
 101 աշխարհականաց լուեալ էր յաղագս
 105 յանիշխանութեան հայել աշխարհ
 Հայոց
 105 անօրէնութեան Տեառն
 116 զպատճառն միայն խնդրէր
 խորվութիւն
 118 եւ անկաւ զմահ ի միոյ՝ ասէ
 120 առնով ձեռնադրութեան լԱղուանից
 120 եւ մեռոն Սիւնք ի լԱղուանից
 120 Նոկ Հայրաձետն Աբրահամ լինել
 ասէր յառաջահաւատ քան զՎիրս,
 120
 134 Խոտուր զԱրք Եպիսկոպոսութիւնն
 135 զձայնքն որ յիշեն
 փախմանցն

որ յաջորդեաց
 սակա երկանցն կորստեան
 որ յաջորդեաց զաթոռն
 այլ եպիսկոպոսք այլօք հանդերձ
 Յունաց կողմանէ են եկեալ
 Ահարոնի Մեհնունեաց
 Թէոդորոս Սեփական գնդին
 որով օծանին եւ լուսաւորին
 ցրուեցան
 կցել 41րդ գլուխին
 Թէ ընդէ՞ր ոչ եկն Մովսէս
 Թուղթսն զոր գրեաց առ Կիւրիոն
 զի մինչ ոչ է
 եւ տոռմարն Լեւոնի
 սուրբ Աթոռ երանելոյ
 Վրացի եւ Հայ ուսումն գիտէ
 ոյ կարծիս տայ տեսողաց
 պայման նամակն
 քաջասուրութիւն
 ամենայն հակառակութիւն ոչ եղեւ
 Զթուղթս զոր առաքեալդ էր
 գրեալդ էր
 երկմտեց ինչ զմեզ
 եւ թէեւ ի հեռագոյն տեղիս
 քննութեան իմիք
 պատուհաս՝ զայն արժան է առնել
 եւ եպիսկոպոսն Նեստորական,
 զոր արարին դպրութիւն, զի եւ
 Վրացերէն գիտէ՝ որպէս արժանն
 է, թող թէ Հայերէն, մեզ անյայտ է:
 աշխարհականաց լուեալ էր մեր յաղագս
 յանիշխանութեան կայր աշխարհ
 Հայոց
 տնօրէնութեան Տեառն
 զպատճառ միայն խնդրէր
 խորվութեան
 եւ ընկալաւ զմահ ի միոյ՝ ասէ
 առնով ձեռնադրութիւն լԱղուանից
 եւ մեռոն Սիւնքիք լԱղուանից
 Նոկ Հայրապետն Աբրահամ լինել
 ասէր զԱղուանս յառաջահաւատ
 քան զՎիրս,
 ետ զԱրք Եպիսկոպոսութիւնն
 զձայնքն որոշեն
 փոխմանցն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ուստանէս Եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց եւ Պատմութիւն Բաժանման Վրաց ի Հայոց, 1871, Վաղարշապատ:

2. Deux Historiens Arméniens: Kirakos de Gantzac, XIIIeS. Histoire d'Arménie, Oukhatnès d'Ourha, XeS. Histoire en Trois Parties. Tr. par M. Brosset, St. Petersburg, 1970.

3. Աբրահամ Գանձակեցի, Պատմություն, Երևան, 1961:

4. Պաղքեան, Նորայր, Արք. Մայր Ցուցակ Երուսաղէմ, Դ հու., Երևան, 1969.

5. Մովսէս Խորենացի, Պատմություն Հայոց, Ստ. Մալխասյանց, Երևան, 1968.

6. Մանանյան, Հ. Քննական Տեսություն Հայ ժողովոյի Պատմության, Բ ա. Երևան, 1957.

7. Պատմա-քանակասիրական Հանդես, 1976, Բ և Դ, Երևան: